Այդ պատմութեան թելերը այսօր կը հիւսուին ձորձ Պոլսի կողմէ: Թելերուն գոյները նոյնն են եւ հագուստին նպատակը անփոփոխ կը մնայ: Աշխարհը Միացեալ Նահանգներուն համար աւելի ապահով տեղ մը դարձրին յու նպատակով եւ հաւատարմով, որ այդ մէկը միայն կարելի է իրագործել աշխարհը Միացեալ Նահանգներուն նմանցնելով, այդ գործելակերպը կրնայ աւելի յարձակողականօրէն օգտագործուիլ Պոլսին, քան անցեալին Պիլիֆիթսի կողմէ, սակայն, բնոյթը կը մնայ նոյնը եւ միայն ուժգնութեան աստիճանն է, որ կը փոխուի: Դէպի Ռուսիոյ սահմաններ ՕՊԱՆԻ ընդլայնումը քիմիկներէն գաղափար մըն էր: Նոյնն էր նաեւ Կասպից ծովու աւազանին շուրջ եւ Ռուսիոյ հարաւային սահմաններուն վրայ ամերիկեան ուժի հաստատումը: Այդ մղումը չի փոխուի նախագահներու փոփոխութեամբ, այլ միայն, երբ Միացեալ Նահանգները ձախողին, ինչպէս կրնայ ըլլալ Իրաքի մէջ: Սակայն, նոյնիսկ Վիետնամի ձախողութենէն ետք, մինչեւ Ռիկոնի նախագահութիւնը տեւեց նաև ուղղելու համար: Հիմա, որ Միացեալ Նահանգները գինուորային մարտահրաշխաններ չեն դիմագրաւեր, այդ կայսերապաշտական փափաքը ուժ կը կուտակէ: Կասկածի միակ փոքր պատճառը վերջնական յաղթանակը իսկապէս Միացեալ Նահանգներուն կողմը ըլլայն է: Ատոր պատասխանը ստանալու համար, պէտք է մէկ կամ նոյնիսկ երկու դար սպասենք:

«Արալիս Նիուզ»

ԽԱՉԲԱՆԻ ԹԻՒ 5441 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

1. Որկրամուկ - Կրկնուած տառեր:	1. Կղպանք - Նուազարանի լրբ:
2. Յոյն դից - Անուակ:	2. Գեղմ - Նաւու ներքին յատակ:
3. Արական օտար անուն - Ուսուկը - Յուցական անուակ:	3. Ալբուրբէնէն - Հին Կտակարանի գիրքերէն - Ռուժի տեսակ:
4. Կովկասեան ժողովուրդ - ձոպան:	4. Վայրի նարդոս - Կողովուրդ:
5. Պայծառ, փայլուն:	5. Ընչասէր, ազահ:
6. Ա. Մ. Նահանգներու 42րդ նախագահ - Ահեակ:	6. Գեղմ - Օտար տիտղոս:
7. Կրկնուած բաղաձայններ - Թագաւորը:	7. Փութկոտութիւն, աճապարանք - Ուրիշ:
8. Յուցական անուակ - Խաժիտական մասնիկ - Խաղողի տեսակ:	8. Կամաց կամաց - Սամարիա քաղաքի հիմնադիրը:
9. Դատաւոր - Եգիպտական աստուած:	9. Շրջուած՝ պողպատեակ - Չայնանիշ:
10. Կիլիկեան քաղաք - Ապուշ:	10. Պէյրուսի արեւմտեան շրջաններէն - Մէկըրմէկ:
11. Ձգտիլ - Ստացական անուակ:	11. Դնդեր - Իմաստակ:

ԹԻՒ 5440

ԽԱՉԲԱՆԻ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Պ	Ա	Ր	ՈՒ	Ս	Ա	Ն	Ք	Ա	
2	Ա	Ղ	Ե	Ս	Ա	Ն	Ա	Հ	Ի	Տ
3	Տ	Օ	Ն	Ե	Ր	ՈՒ	Ն	Ե	Ր	
4	Ա	Տ	Ի	Կ	Ա	Ք	Ա	ՈՒ	Ի	
5	Ղ	Գ	Ա	Ն	Կ	Ե	Ձ	Ն		
6	Ի	Գ	Ա	Յ	Մ	Ա	Ն	Ի	Ա	
7	Ճ	Ի	Մ	Ա	Կ	Ն	ՈՒ			
8	Ն	ՈՒ	Յ	Մ	Ա	Ն	ՈՒ			
9	Խ	Ե	Լ	Մ	Ա	Ր	Ի	Ա	Ձ	
10	Ա	Ա	Ս	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	
11	Լ	Կ	Տ	Ի	Ք	Տ	Ա	Ր	Ա	Ձ

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ԶՐՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

ԱՍԱՌՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅՈԹԵԱՅ ՀԱՆԳԻՍՏԻ ՄԹՆՈԼՈՐՏ ՊԱՏՐԱՍՏՈՂ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ ՄԸ՝ «ԹԵՐԱՍ Է ԺԱՐՏԱՆ»



Ա մ ա ղ ն ա յ ի ն եղանակի սկիզբը խաղաղ ու հանդարտ անկիւնի մը մէջ հանգիստ փնտռող ներքին անկախ արարչական արարչու կու գան փակ ու ծանր կարասիներով խճողուած սենեակներէն՝ վայելելու համար մեղմ ու զուարթ եղանակը: Այս շրջանին է, որ մեծ ժողովրդական ու թիւն կը վայելէ պատշգամները, բակերն ու պարտէզները պարզաբանութեամբ կը ներկայացնեն իրենց արարչական ու թիւնը: Այսօր երեկոյեան Ամշիթ գտնուող «Փիացա տէլ Պամպիս»-ի մէջ տեղի պիտի ունենայ պարտէզներու յարմար ցուցահանդէս մը՝ «Թերաս է ժարտան», որ պիտի տեսնուին 24 Մայիս: Հինգ օրուան վրայ երկարող այս ցուցահանդէսը ունի ցուցարարական թէ բացօթեայ տարածքներուն վրայ տարածուած ըլլալու առաւելունք:

թիւնը եւ գործնական կիրարկումով կը ներկայացնէ պարտէզներու յարմարանքի սահմանում իւրաքանչիւր իրի գործածութեան կերպն ու անոր ձգտումը տպաւորութեան մէջ եղող այս ցուցահանդէսը կը ներկայացնէ լիբանանցի քանի մը արւեստագէտներու յարմար արուեստի յղացումներէն օրից օրուան առաւելունքը: Մարտի 10:00էն մինչեւ գիշերուան ժամը 10:00:

ՕՂԵՐԵՒՈՅԹ

ԵՐԵՎԱՆԻ, 20 ՄԱՅԻՍ 2003

ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ԾԵՐԵԿ՝ 28°C

ԳԻՇԵՐ՝ 21°C

ԽՈՆԱՒՈՒԹԻՒՆ՝ 59%

ԱՅՍՕՐ

- Երեկոյեան գծակարներու փառատոն, ԵՈՒՆԵՍԿՕ-ի մէջ, մինչեւ 24 Մայիս:

- Ցուցահանդէս «Թերաս է ժարտան», «Փիացա տէլ Պամպիս»-ի մէջ, մինչեւ 24 Մայիս:

- Նկարչական ցուցահանդէս՝ Ճիւլիանո Թալանի գործերը, «Այտա Շերֆան» արուեստի ցուցարան, մինչեւ 6 Յունիս:

- Ցուցահանդէս՝ «Լէ Լիտ տը լա մեմուար երբի», ԵՈՒՆԵՍԿՕ-ի մէջ, մինչեւ 29 Մայիս:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Ճընիթ թուրքալըր», Ապտէլ Մաուլա Օուէյնիի գործերը, «Աստիսիտի փուր լը տեւելովման սոսիալ» կեդրոնի մէջ, մինչեւ 24 Մայիս:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Ժեօն ֆամ», Քարին Ուահպէի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցարանի մէջ, մինչեւ 31 Մայիս:

ԱԶԳԱԿ 50 ՏՆՏՐԻ ԵՌՈՒՄԸ 20 Մայիս 1953

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՄԱՆ 125ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

«Սովետական Հայաստան» կը գրէ. - Մարտ 20-21-ին տեղի ունեցաւ Երեւանի Պետական Ձեռագրատան 6րդ գիտական նիւթը, որ նուիրուած էր Հայաստանի Ռուսաստանի միացման 125ամեակին:

Նիւթը բացաւ Մատենադարանի տնօրէնը՝ Վ. Նալբանդեան եւ խօսեցաւ «Հայաստանի միացումը Ռուսաստանին եւ իր պատմական նշանակութեան» մասին շուրջ: Ձեկուցում տուաւ պատմական գիտութիւններու թեկնածու Պ. Սէյրանեան:

Թիֆլիսէն եկած փրոֆ. Ի. Արուստանեան խօսեցաւ «Նոր գրական յուշարձաններ վրայ եւ հայոց գրական յարմարութիւնները մասին անցեալին մէջ» մասին շուրջ, զոր կարդացած է հայերէն: Բացատրեց, թէ հայ եւ վրացի ժողովուրդները դեռ հեռուոր անցեալին եղբայրական կապերով կապուած են իրարու հետ, ունեցած են գրական սերտ յարաբերութիւններ: Հայերէնը վրացերէնը եւ վրացերէնը հայերէնը թարգմանուած են բազմաթիւ երկեր: Մասնաւորապէս կանգ առաւ ժե. դարու մէջ վրացերէնը հայերէնը թարգմանուած աստղաբաշխական եւ բժշկական երկու գիրքերու վրայ:

Փրոֆ. Արախամեան բազմաթիւ նորայայտ փաստաթուղթերով ցոյց տուաւ, թէ ինչպիսի՞ ծանր վիճակի մէջ է եղած հայ ժողովուրդը պարսկաթրքական բռնակալութեան տակ եւ թէ ինչպիսի՞ շեղումներով ընդունուած է Հայաստանի Ռուսաստանի միանալու փաստը ամբողջ հայ ժողովուրդի կողմէ:

Ռուս եւ Անգլիկոս ժողովուրդներու բարեկամութեան արտացոլումը 1795-1828-ին հայ գրականութեան մէջ «ճիւլիանո Թալանի» մասին գեկուցում տուաւ Մատենադարանի աշխատակից Աս. Մնացականեան:

ԱՅՍՕՐ՝ 20 ՄԱՅԻՍԻՆ

1851 - Ծնունդ բանաստեղծ Պետրոս Դուրեանի:



1912 - Մահ Եփրեմ Խանի:

1915 - Մահ Խոսրո Կորիւնի:

1927 - Լինապետիկ կը կատարէ Նիւ Եորքէն Փարիզ առաջին ուղիղ թռիչքը:

Մ Ա Ր Զ Ա Կ ԱՆ

ԱՇԽԱՐՀ



ԼԻՔԱՆԱՆԻ ՖՈՒՐԿՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆ

ՕԼԻՄՓԻԲ ԱՆՈՐԺԱԿԸ ՄՐԱԾ՝ ՏԻՏՂՈՍԻՆ

Լիբանանի ֆուրբոլի ախոյեանութեան 21րդ եւ նախաՎերջին հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Օլիմփիք եթէ յաջողի պարտութեան մատնել Անսարը եւ միեւնոյն ժամանակ ալ Նըժմէ պարտութիւն մը կրէ Սաժէսէն, Օլիմփիք պիտի հանդիսանայ Լիբանանի ախոյեան, առանց սպասելու իր կատարելիք վերջին մրցումին՝ Սաժէսի դէմ:

Իր վերջին մրցումին, Նըժմէ պիտի ձակարկի Ախտի դէմ, որ գրեթէ կորսնցուցած է տիտղոսին տիրանալու իր յոյսերը:

ՆախաՎերջին հանգրուանի մրցումներուն այժմ դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը (12 խումբերն ալ կատարած են 20ական մրցում):

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Օլիմփիք	1	2	4	36	12	44
2.- Նըժմէ	13	4	3	37	19	41
3.- Ախտ	12	4	4	33	17	38
4.- Անսար	9	9	2	31	17	36
5.- Թ. Սուր	8	7	5	29	24	31
6.- Սաֆա	6	6	8	21	25	24
7.- Սաժէս	5	8	7	23	26	23
8.- Սալամ	5	5	10	26	34	20
9.- Սահէլ	3	8	8	23	34	17
10.- Մապարրա	3	8	9	20	33	17
11.- Սիսա	4	4	12	16	33	16
12.- Պըրժ	5	2	13	18	39	11

• ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ 6 կէտ խլած է Պըրժէն:

ԼԻՈՆ ԱՅՍՕՐ ԿՐՆԱՅ ԱՆՈՅԵԱՆ ԸԱՆԴԻՍԱՆԱԼ

Ֆրանսայի ֆուրբոլի ախոյեանութեան 37րդ եւ նախաՎերջին հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան այսօր, ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը գրաւող Լիոն կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Մոնփելիէի դաշտը: Թէեւ Մոնփելիէ կը գրաւէ 14րդ դիրքը, սակայն անհկա կրնայ խանգարել Լիոնի հաշիւները, անշուշտ եթէ յաղթանակ մը արձանագրէ:

Լիոնի պարտութենէն պատրաստ է օգտուելու 2րդ դիրքը գրաւող Մոնաքօ, որ 45նկանի հիւրը պիտի ըլլայ (8րդ):

Եթէ պատահի, որ Լիոն յաղթանակ մը արձանագրէ եւ միեւնոյն ժամանակ Մոնաքօ ձախողի այդ մէկը իրագործել եւ նոյնիսկ հաւասարութիւն մը արձանագրել, Լիոն պիտի հանդիսանայ 2002 - 2003 եղանակի Ֆրանսայի ախոյեան:

Լիոնի եւ Մոնաքօյի պարտութեան պարագային, այլ կազմ մը՝ Մարսէյ դարձեալ պիտի մտնէ ախոյեանութեան պայքարին մէջ, անշուշտ եթէ անհկա իր դաշտին՝ «Վելտորն»ի մէջ յաջողի պարտութեան մատնել 18րդ դիրքը գրաւող Ստուանը:

Բուական հետաքրքրական մրցում մը տեղի պիտի ունենայ «Փարք Տէ Փրէնս»ի մէջ, ուր մայրա-

քաղաքի կազմը՝ Փարիզ Սէն ժերմէն (9րդ) պիտի հիւրընկալէ ոչ այդքան լաւ դիրքի վրայ գտնուող Ռէննը (17րդ):

Յառաջիկայ եղանակին համար Փարիզ Սէն ժերմէնի մարզիչ նշանակուած պոստիւսի Վալիտ Հալիլիոնի իր նախաՎերջին մրցումը պիտի կատարէ իր կազմին՝ Ռէննի հետ, որ Բ. դասակարգ փոխադրուելու վտանգին տակ է:

Յառաջիկայ եղանակին եւրոպայի մրցաշարքին դուրս չմնալու համար այս մրցումով այդքան ալ հետաքրքրուած չէ Փարիզ Սէն ժերմէն, քան այս ամսուան վերջը Օքսֆորդի դէմ տեղի ունենալիք Ֆրանսայի ֆուրբոլի բաժակի մրցաշարքին աւարտականի մրցումով:

Ստորեւ՝ 37րդ եւ նախաՎերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (փակագիծին մէջ նշուած են անոնց գրաւած դիրքերը):

- Լիլ (15) - Ամաքսիօ (16)
- Սթրասպուրկ (13) - Օքսֆո (6)
- Նիս (8) - Պոլսո (4)
- Լը Հաւրը (19) - Լանս (11)
- Մոնփելիէ (14) - Լիոն (1)
- Կէնկան (7) - Մոնաքօ (2)
- Թրուա (20) - Նանթ (10)
- Փարիզ Սէն ժերմէն (9) - Ռէնն (17)
- Մարսէյ (3) - Սըտան (18)
- Պարիս (12) - Սոչօ (5)

ՊՈՒՆՏԵՍՆԻԿԱ

ԱՆՈՅԵԱՆ ՊԱՅԷՐՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԅՅԱՂԹԵԼ...



Պայէրն Միւնիխ մարզիկները՝ տօնախմբութեան ընթացքին

Գերմանիոյ ֆուրբոլի ախոյեանութեան (Պունտրայիկա) 33րդ եւ նախաՎերջին հանգրուանի մրցումներուն, նկատի ունենալէրն Միւնիխ, որ իր դաշտին վրայ հիւրընկալէ Շթուրկարթը, 2-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, շնորհիւ՝ պրայիլիցի ձիովանի Էլպէրի նշանակած կոլերուն (46րդ եւ 75րդ): Շթուրկարթի կոլը նշանակեց Շոն Տանտի (82րդ):

Հակառակ անոր որ 2002-2003 եղանակին աւարտին մնացած է մէկ հանգրուան եւս, սակայն ախոյեան Պայէրն Միւնիխ իր տիտղոսը ստացաւ Գերմանիոյ ֆուրբոլի ապագային խումբին մարզիչ Ռուտի Ֆէլքերէն, նկատի ունենալով որ Պայէրն իր վերջին մրցումը պիտի կատարէ օտար դաշտի վրայ: Իր նոր մարզիչին՝ Քլաուս Աուկընսայրրի հետ Պայէրն Լեւերքու-

զըն 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք 1860 Միւնիխը, որոշ չափով մը հեռացաւ վտանգաւոր դիրքէն, նկատի ունենալով որ վերջին երեք դիրքերը գրաւողները կը փոխադրուին Բ. դասակարգ: Նշենք, թէ ցարդ Նիւրնբերկ (17րդ) եւ Քոթայու (18րդ) փոխադրուած են Բ. դասակարգ, մինչ երրորդին անունը ցարդ կը մնայ անորոշ:

Ստորեւ՝ 33րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Պայէրն Միւնիխ - Շթուրկարթ	2-1
Պոխում - Համպուրկ	1-1
Քոթայու - Նիւրնբերկ	2-1
Հանպ Ռոսթը - Արմինիա Պիլիֆելտ	3-0
Հանովըր 96 - Պ. Մէօսընկլատպախ	2-2
Քայլերայտուրթըն - Պորուսիա Տորթմունտ	0-0
Պայէր Լեւերքուզըն - 1860 Միւնիխ	3-0
Վերտըր Պրեմըն - Շալքէ	2-1
Վոլֆսպուրկ - Հերթա Պերլին	2-0

ԳԱՍԱԴՈՐՈՒՄ	ՅԱԳԹ. ՀԱՒ. ՊԱՐՏ. ԿԵՏ
1.- Պայէրն Միւնիխ	23 6 4 75
2.- Պորուսիա Տորթ.	15 12 6 57
3.- Շթուրկարթ	16 8 9 56
4.- Համպուրկ	14 11 8 53
5.- Վերտըր Պրեմըն	16 4 13 52
6.- Հերթա Պերլին	15 6 12 51
7.- Շալքէ	11 13 9 46
8.- Վոլֆսպուրկ	13 7 13 46
9.- 1860 Միւնիխ	12 9 12 45
10.- Պոխում	11 9 13 42

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԵՍԼ ՍՈՍԻԵՏՍՏ՝ ԱՌԱՋԻՆ

Սպանիոյ ֆուրբոլի ախոյեանութեան 34րդ հանգրուանին արձանագրուած մրցումներուն արդիւնքները դարձեալ փոփոխութեան ենթարկեցին ընդհանուր դասաւորման առաջին երեք դիրքերը:

Տեփոքիւս Բորուսիա իր դաշտին վրայ 2 - 1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Վալենսիայէն, պարագլուխի դիրքէն նահանջեց 3րդ դիրքը: Անոր դիրքը գրաւեց Ռեալ Սոսիէտաս: Անիկա այժմ մէկ կէտով կը գերազանցէ Ռեալ Մատրիտը, որ իր կարգին յաղթանակ մը արձանագրեց:

Ստորեւ՝ 34րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Ռեալ Վալատոլիտ - Էսփանիոլ	1-1
Ալաւէս - Աթլէթիքօ Պիլպասօ	2-4
Վարէալ - Սելթա Վիլո	5-0
Սելթա - Ռալօ Վալէքանօ	3-3
Ռեալ Սոսիէտաս - Ռեքրէաթիւո Հուլիա	1-0
Ռեալ Մատրիտ - Մալալկա	5-1
Օաստուս - Ռեալ Պրէթա	2-1
Պարսելոնա - Մալորքա	1-2
Ռասիլ Սանթանտէր - Աթլ. Մատրիտ	0-2
Տեփոքիւս Բորուսիա - Վալենսիա	1-2

ԳԱՍԱԴՈՐՈՒՄ

ԳԱՍԱԴՈՐՈՒՄ	ՅԱԳԹ. ՀԱՒ. ՊԱՐՏ. ԿԵՏ
1.- Ռեալ Սոսիէտաս	20 9 5 69
2.- Ռեալ Մատրիտ	19 11 4 68
3.- Տեփ. Բորուսիա	20 6 8 66
4.- Վալենսիա	16 8 10 56
5.- Սելթա Վիլո	15 9 10 54
6.- Աթլէթիքօ Պիլպասօ	13 9 12 48
7.- Մալորքա	13 8 13 47
8.- Պարսելոնա	11 11 12 44
9.- Աթլէթիքօ Մատրիտ	11 11 12 44
10.- Սելթա	11 11 12 44

ՀՆԾԵԼԱՐՇԱԲ. ԺԻՐՈ

ՉԻՓՈԼԻՆԻ՝ 9ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՅԱՂԹԱԿԱՆԸ

Իտալիոյ հեծելաբաշտի շրջափակին (ժիրօ) 9րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երկ Արեւոյնի Մոնթիքաթինի (160 քմ.), վերջ ցտաւ իտալացի հեծելաւորը Մարիօ Չիփոլինիի (Տոմիսա Վաքանի) յաղթանակով, որ ժամանան գիծ հասաւ, արձանագրելով՝ 3 ժամ 41 վայրկեան եւ 58 երկվայրկեան արդիւնք մը:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, թէեւ 36 տարեկան Չիփոլինի մրցանիշ մը հաստատեց ժիրոյին ընթացքին իր 42րդ յաղթանակը արձանագրելով, սակայն ան այդքան ալ խանդավառ չէր թուեր, որովհետեւ Ֆրանսայի հեծելաբաշտի շրջափակին կապակերպիչները երկ յայտնեցին, թէ անոր հրաւեր չեն դրկած՝ իր մասնակցութիւնը բերելու Ֆրանսայի շրջափակին, որ պիտի սկսի յառաջիկայ Յուլիոս 5ին:

Երկուսն 9րդ հանգրուանի մրցումին, 2րդ դիրքը գրաւեց աստրալիացի Ռոպի Մաքիվըն, իսկ 3րդ դիրքը՝ Ալեանտրօ Փեթաքի:

Ընդհանուր դասաւորման մէջ իտալացի Շթեֆանօ Կարծելլի (Սիտերմէն) իր մօտ կը պահէ մանիշակագոյն շապիկը:


Այսօր տեղի կ'ունենայ 10րդ հանգրուանի մրցումը, Մոնթեքաթինի Թերմէնի՝ Ֆաէնպա (202 քմ.):

Ստորեւ՝ ընդհանուր դասաւորումը:

- 1.- Շթեֆանօ Կարծելլի (Իտալիա) 40 ժամ 51' 8"
- 2.- Ճիլպէրթօ Սիմոնի (Իտալիա) 31' ուշ
- 3.- Անտրէա Նոէ (Իտալիա) 54" ուշ
- 4.- Ֆրանչօ Փելլիպօրթի (Իտալիա) 1' 36" ուշ
- 5.- Մարիուս Սապալիոսքաս (Լիթվանիա) 1' 38" ուշ

ԵԿԵՐ ՃԱՌԱԴՈՒՆՔ

Կը սիրե՞ս պատմութիւններ հնարել, երեւակայութիւնդ աշխատցնել, շարադրել...



Մ ա ս ն ա կ Կ Ե՛
«Պատիկ-Մպտիկ»ի շարադրութեան մրցումին:
- Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտները:
- Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 9 Մա-յիսէն 27 Մայիս, հեռաձայնելով 01-260115 թիվին, երկուշաբթիէն Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00:
- Մրցումը տեղի պիտի ունենայ կիրակի, 1 Յունիսին, «Յ. Տէր Մեյրոնեան» թատերասրահին մէջ, առաւօտեան ժամը 10:00-12:30:

Բոլոր մասնակցողները պէտք է թատերասրահ գտնուին ժամը 9:30ին:

Մասնակցողները պէտք է իրենց հետ ունենան իրենց գրեական պիտոյքները:

- Իրաքանչիւր մակարդակի առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացողները պիտի ստանան արձեքատր նուէրներ:

- Արդիւնքները պիտի յայտարարուին «Պատիկ-Մպտիկ»ի Ուրբաթ 20 Յունիսի թիւով:

«ԿԵՆՆՔ ՄԸ ՓՐԿԵՆՔ»

ՖՈՆՏԻՆ

• Երուանդ Սոնոֆարեանի մահուան առիթով, Տէր եւ տիկին Միշէլ եւ Շաքէ Խորոզեան 100,000 Լ.Ո.

ԽԱՍԵՆԷԻ ԿԸ ԳԱՏԱՊԱՐՏԷ

«ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲՆՈՅԹԻ ԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ»Ը

ԹԵՎՐԱՆ, 19 (ԱՅՓ).- Իրանի հոգեւոր գերագոյն պետ Սայթոլլա Խամենեյի Երկուշաբթի օր դատաւարտած է «ամերիկեան բնոյթի իսլամութիւն»ը, իբրեւ կրօնքի յետամնաց ձեւ մը, որ միայն ամերիկեան շահերուն կը ծառայէ:

Բարձրաստիճան պաշտօնատարներու, որոնց կարգին՝ նախագահ Մոհամէտ Խաթամեյի ներկայութեան արտասանուած խօսքի մը մէջ, Խամենեյի ըսած է. «Իսլամական ազգը փայլուն ապագայ մը պիտի ունենայ դիմելով միայն Մոհամէտի Կուտ իսլամութեան, որ ամբարտաւանութեան ընդդիմացող իսլամութիւնն է»:

Մինչ այդ, նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանճանի հերքած է Իրանի կորիզային ծրագիրներուն գծով ամերիկեան ամբաստանութիւնները, շեշտելով, թէ անոնք «խաղաղարար» նպատակներ կը հետապնդեն:

Ան արաբական պատկերասփիւռի «Ալամ» կայանին ըսած է, թէ կորիզային ուժանիւթի «խաղաղ» նպատակներու համար գործածութիւնը» երկրին կառավարութեան եւ ազգին «քնական պահանջն է»:

Միւս կողմէ, ան «անհիմն» նկատած է ամերիկեան այն ամբաստանութիւնները, թէ Թեհրան ապաստան տուած է «Քայիտա» ցանցին կարգ մը ղեկավարներուն, Աֆղանիստանի մէջ 2001ի պատերազմէն ետք:

ՅՈՅՆ ԿԵՊՐԱՅԻՆԵՐՈՒՆ ԹՈՒՐԲԵՎ ԸԱՄԲՈՐԳՈՒԹԵԱՆ ԱՐԳԵԼՔԻՆ ՉՆՉՈՒՄԵՆ ԳԾՈՎ

ԿԻՊՐՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԶԳՈՒՇԱԻՈՐ ԿԵՐՊՈՎ Կ՝ՈՂՋՈՒՆԷ ԱՆԳԱՐԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Կիպրոսի կառավարութիւնը երէկ կոչուած կերպով ողջունած է յոյն կիպրացիներուն Թուրքիա ճամբորդութեան դէմ տասնամեակներէ ի վեր հաստատուած արգելքին վերջ տալու Անգարայի որոշումը:

Կառավարութեան բանբերը՝ Քիփրոս Խրիստոփիտէս, որուն երկիրը Ե. Միութեան պիտի անդամակցի գալ տարի, մասնաւորապէս ընթացքին յայտնած է, թէ Թուրքիոյ կողմէ առնուած իրաքանչիւր քայլ, որ միջազգային օրէնքի համաձայն է, «որական է»:

Ան աւելցուցած է, որ յոյն կիպրացիներուն Թուրքիա այցելութիւնը արգելելու ապօրինի արարք մըն է, հիմնուած՝ ցեղային խտրականութեան վրայ:

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան Ուրբաթ օր յայտարարած է, թէ Մայիս 22էն սկսեալ Անգարա վերջ պիտի տայ յոյն կիպրացիներու Թուրքիա այցելութեան դէմ հաստատուած արգելքին:

Թուրք բարձրաստիճան դիւանագետ մը յայտնած է, որ այդ քայլը չի նշանակեր, թէ Թուրքիա յետո պիտի կոչէ 1974ի մէկ որոշումը՝ յոյն կիպրական կառավարութիւնը չճանչնալու գծով:

Խրիստոփիտէս երէկ ըսած է, որ Անգարայի քայլերը բարի կամեցողութեան «ծես» մը կամ փոխադարձ միջոց մը կարելի չէ նկատել:

Ան նաեւ կոչուցուցած է, որ ապօրինի պիտի ըլլայ յոյն կիպրացիներուն համար հիւսիսային Կիպրոսէն մուտքի արտօնագիր ստանալ կամ հոն կէ Թուրքիա մեկնիլ:

ՅՈՒՆԱՍԱՆ 1996ԻՆ ՕԳԱՆԱՒ ՍԸ ՎԱՐ ԱՈԱԾ Է

Միւս կողմէ, թուրք նախկին կոչվար մը երէկ ըսած է, թէ Անգարա վնասուց հաստատուած պէտք է պահանջէ անսխալութեամբ դէպքի մը համար, որուն ընթացքին Յունաստան 1996ին թրքական ռազմական օդանայն մը վար առած է Եգէական ծովու վերէն:

(ԱՅՓ)

ՍՏՈՅԳ ՉԷ, ԹԷ «ԲԱՅԻՏԱ» ԿԸ ԿԱՆԳՆԻ ...

Ծարունակուած Ա. Էջէն

Քննութիւն տանելու համար գործողութիւններուն շուրջը: Ըստ Սախա Լուաշիրայի, որ տնօրէնն է այն դիպոցներուն, ուր փոխադրուած են յարձակումները գործածներու դիակները, ցարդ 13էն 8ին ինքնութիւնը ճշգրտած է եւ անոնք բոլորը մարտիկներ են, ըսած է ան:

Քննիչներ կարգի գտած են անոնց եւ մարտիկներ արմատական խմբակի մը միջեւ՝ «Ասիլթաթ Մուսթափա», որուն գործունէութիւնը արգելուած է:

Յունուարին անոր քանի մը անդամներուն դէմ մինչեւ 20 տարուան բանտարկութեան վճիռ արձակուած էր, որովհետեւ անոնք «Ֆաթիմա»ի մը հիմամբ մարդ մը բարկածած են:

Մինչ այդ, Ռապաթի մէջ երէկ պաշտօնատարներ յայտարարած են, թէ պիտի ձեռնարկեն արշաւի մը, փարատելու համար մտահոգութիւնները անոնց, որոնք կը ծրագրեն Մարտը այցելել, թէ զբօսաշրջութեան կեդրոններուն մէջ ապահովութեան միջոցառումներուն թիւք տրուած է:

ՏԱՐԱՆԻ ՄԵՋ ԶԻՆԵԱՆ ՍԸ ԶԵՐԲԱԿԱՆՈՒՄ

Միւս կողմէ, Ռիատի մէջ ամերիկեան դեսպանատունը երէկ յայտնած է, թէ սեղուական արարական ոստիկանութիւնը ձերբակալած է զինեալ մը, որ Տահրան քաղաքին մէջ ամերիկեան հիւպատոսարանին առջեւ կը գտնուէր:

Շարաթ մը առաջ, 34 զէնք արձանագրուած էր, երբ սեղուացիներ Ռիատի մէջ անձնապահական գործողութիւններու ձեռնարկած էին օտարահպատակներու յատկացուած բնակարանային համալիրներու դէմ:

Հիւպատոսարանը երէկ փակ մնացած է:

Սեղուական Արաբիա Կիրակի օր ըսած էր, թէ Մայիս 12ի անձնապահական գործողութիւններուն կապակցութեամբ «Քայիտա»ի 4 անդամներ ձերբակալած է:

Յարձակումներուն ընթացքին մահացած 9 ականահարողներէն երեքը մաս կը կազմէին «Քայիտա»ի 19 անդամնոց ընկիւնը մը, որուն յայտնաբերումին մասին յայտարարութիւն կատարուած էր Մայիս 7ին եւ որոնց նկարները լոյս տեսած էին տեղական մամուլին մէջ:

Արտաքին գործոց նախարար Սաուտ Ֆայսալ իշխանը յայտնած է, որ անցեալ Երկուշաբթի օրուան ռաբահարումներուն 15 հոգի մահակցած է, առանց յստակացնելու, թէ մնացեալ 6ին ճակատագիրը ի՞նչ եղած է:

ՊԸՆ ԼԱՏԵՆԻ ԹԻԿԱՊԱՐԸ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԷ

Ըստ միջազգային ահաբեկչութեան մասնագէտ Ռոհան Կունարթանայի, «Քայիտա» Ուսամա Դըն Լաւանի անձնական ապահովութեան մասնագէտ եգիպտացի Սայֆ Ատէլը նշանակած է կազմակերպութեան գիւնտերական նոր ղեկավարը, փոխարինելով իսլամ ԵՃԵՍ Մոհամէտը:

Ամերիկեան արտաքին գործոց նախարարութիւնը 25 միլիոն տոլար խոստացած է Ատէլը ձեռք ձգելու համար:

Միւս կողմէ, «Տը Ուաշինթըն Փոսթ» թերթը երէկ հաղորդած է, որ սեղուցի պաշտօնատարներ քննութիւն բացած են «Քայիտա»ի զինքերու վաճառքին շուրջ՝ սեղուական արարական ազգային պահակազույնին անդամներու կողմէ:

Թերթին համաձայն, Մայիս 6ին Ս. Արաբիոյ մէջ «Քայիտա»ի մէկ կեդրոնին մէջ գտնուած եւ գրաւուած զինքերուն հետքը հասած է ազգային պահակազույնին, մէջբերելով ամերիկացի եւ սեղուցի պաշտօնատարները:

Աւելի ուշ, սակայն, սեղուական արտաքին գործոց նախարարութիւնը հերքած է, ըսելով, թէ զինքերը ուսակական են եւ թէ ազգային պահակազույնը ուսակական զինքեր չունի:

Մինչ այդ, Գահրեթի մէջ ամերիկեան դեսպանատունը երէկ յայտնած է, որ ամերիկեան եւ եգիպտական իշխանութիւնները քայլերու դիմած են երկրին մէջ ամերիկացիներու ապահովութեան հսկելու համար, Մարտի եւ Ս. Արաբիոյ յարձակումներէն ետք:

●ՄՈՑԻ Գործակալութեան խորհուրդը վաղը Ռիատի մէջ ժողով մը պիտի գումարէ՝ Իրաքի, Միջին Արեւելքի եւ ահաբեկչութեան հարցերը քննարկելու համար:

(ԱՅՓ)

ՇԻՒՆԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ ԿՐՑԱՆ ԲԱՑԱՅԱՅՏՕՐԵՆ ՆՇԵԼ ՄՈՂԱՄԵՏ ՄԱՐԳԱՐԻԻ ԾՆՆԴԵԱՆ ՏԱՐԵՂԱՐՁԸ

Իրաքի մէջ շիւները տասնամեակներէ ի վեր առաջին անգամ ըլլալով երէկ կրցան բացայայտօրէն նշել Մոհամէտ մարգարէի ծննդեան տարեդարձը, մինչ երկրին մէջ տիրող անիշխանութիւնը եւ քառասյին վիճակը կը սպառնալով վերակառուցելու ամերիկեան ճիգերը:

Մինչ այդ, Իրաքի մէջ ամերիկեան գլխաւորութեամբ դաշնակիցները երէկ պնդեցին, թէ Իրաքեան կառավարութեան մը կազմութեան համար ծրագիրները ընթացքի մէջ են, իսկ Ռուսիա ակնարկեց այն կարելիութեան, թէ միջին լուծում մը կրնայ գտնուիլ Իրաքի դէմ տնտեսական պատժամիջոցներու շնչումին գծով ՄԱԿի մէկ բանաձեւին մասին:

Հապարար շիւներ երէկ ուղղուած են Պաղտատի գլխաւոր մկիթը՝ «Ո՛չ անարդարութեան», «Ո՛չ գրաւումին», «Ո՛չ Իսրայէլի», «Ա՛յո՛», իսլամութեան» բացազանչելով:

Իմամ Մոհամէտ Ֆարուսի գովասանքով արտայայտուած է Սատտամ Հիւսէյնի տապալման մասին եւ Իրաքը «իմամներու երկիրը, իսլամութեան երկիրը» կոչած է:

Մինչ այդ, Իրաքի ներքին հարցերով պարզող ամերիկացի պատասխանատու Փոլ Պրեմըր երէկ կը թեալար իր պաշտօնին Իրաքի մէջ պէտք է միառաջին 7 օրերուն հետեւողականօրէն խոստացած էր երկրին մէջ:



Կարգ ու կանոնը վերահաստատել, սակայն հակառակ շարք մը խիստ հրամանագիրներու, ան չէ կրցած վերջ տալ ռիփորմներուն եւ վայրագութեան:

Պրեմըր քննադատուած է նաեւ որովհետեւ ան հրաժարած է կառավարութեան կազմութեան մասին կազմութեան համար նախապէս ճշդուած ժամկէտէն, սակայն ամերիկացի պաշտօնատարներ երէկ պնդած են, թէ կառավարութեան կազմութեան ծրագիրները ընթացքի մէջ են:

Մինչ այդ, Իրաքի նախկին արտաքին գործոց նախարար մը՝ Ատնան Փաշաչի, որ Մայիս 6ին 33 տարուան քարտէ մը ետք իր երկիրը վերադարձած է, «Չաման» օրաթերթին յայտնած է, որ Իրաքի մէջ պէտք է միառաջին 7 օրերուն հետեւողականօրէն խոստացած էր երկրին մէջ:

Ան ըսած է, թէ առժամայն կառավարութիւն մը պէտք է ընտրական օրէնքներ ստեղծէ՝ խորհրդարանի մը ուղղակի ընտրութիւններու ձամբան հարթելու համար, որպէսզի աւելի ուշ խորհրդարանը սահմանադրութիւն մը մշակէ:

Սահմանադրութեան գծով հանրաքուէ մը կրնայ յանգիլ նոր կառավարութեան մը կազմութեան նպատակով ընտրութիւններու, ըսած է 80 տարեկան Փաշաչի:

Անաբար պիտի քուէարկէ ամերիկեան-բրիտանական բանաձեւի նախագիծի մը մասին՝ 1990էն ետք Իրաքի դէմ տնտեսական պատժամիջոցներու շնչումին առնչութեամբ:

Սակայն Ֆետորով չէ յայտնած, թէ Ռուսիա Վորապիգ պիտի կանգնի՝ բանաձեւին, զոր Մ. Նահանգներ, Բրիտանիա եւ Սպանիա աւելի քան շաբաթ մը առաջ ներկայացուցած են եւ զոր դիւանագետներ վերատեսչութեան կ'ենթարկեն:

(ԱՅՓ)

ՇԱՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԳԱՐՉԵԱԼ ԹՎՈՒ ԿՈՒ ՏԱՅ ԱՐԱՅԱԹԸ ՄԵԿՈՒՄԱՑՆԵԼՈՒ...

Ծարունակուած Ա. Էջէն

քական անձնատիրութիւն, որ կը ծրագրէ շրջան այցելութեան մը ընթացքին Արաֆաթի հետ տեսակցութիւն ունենայ, իսրայէլացի ռեւէ պաշտօնատարի հետ հանդիպում պիտի չունենայ:

Այդ արգելքները չեն վերաբերիր արդէն իսկ դատարանու 5 այցելութիւններու, որոնց կարգին՝ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմինիք Տը Վիլիէնի հետ: Ան Մայիս 26ին Ռամալլայի մէջ հանդիպում պիտի ունենայ Արաֆաթի հետ:

Իսրայէլ Կիրակի օր Արաֆաթը ամբաստանած էր ըսելով, թէ ան կը հրահրէ պաղեստինցիներու կողմէ յարձակումները: Շաբաթավերջին տեղի ունեցած անձնասպանական գործողութիւնները 9 պոկ իսլամ են, ինչպէս նաեւ անոնց ձեռնարկած երեք պաղեստինցիներ:

Երէկ Աֆոնյայի մէջ տեղի ունեցած անձնասպանական այլ գործողութեան մը պատճառով իսրայէլացի երեք պիտուր, ինչպէս նաեւ Քամիթալը, սպաննուած են, իսրայէլեան իշխանութիւններուն այն հրահանգէն ետք, թէ ցնոր տնօրինութիւն ռեւէ պաղեստինցիի պիտի չարտօնուի գրաւեալ հողամասեր մտնել կամ հետանալ:

Համաս երէկ ստանձնած է Երուսաղէմի եւ Հեպրոնի շաբաթավերջի անձնասպանական գործողութիւնները, ըսելով, թէ անոնք հակադարձութիւնն են իսրայէլի Մարտի մէջ սպանութեան: Համասի պաղեստինցիներու պատասխանատուն Մարտ 8ին իր երեք թիկնապահներուն հետ սպաննուած էր Կապալի մէջ, իսրայէլեան ուժերուն կողմէ:

ՄԱԿ գործակալութիւններ են այլ խմբակներ երէկ բողոքած են իսրայէլեան քանակին կողմէ Կապալ մտնել փափաքող օտարներու դէմ որոնած արգելքներուն դէմ:

Միացեալ հարդրագրութեան մը մէջ, 18 կազմակերպութիւնները գանգատած են, որ Էրէզի անցքին փակումը՝ ՄԱԿ գործակալութիւններուն, ոչ կառավարական կազմակերպութիւններուն եւ այլ գործակալութիւններու աշխատանքները «անտրամաբար»

նականօրէն դժուարացուցած են, նսօգուտ եւ սուղ դարձուցած:

Միւս կողմէ, պաղեստինեան ապահովութեան աղբիւրներ յայտնած են, թէ Կապալի մէջ իսրայէլեան «պոլիտոլոգներ» պաղեստինեան 8 տուններ են մկիթի մը մէկ մասը քանդած են երէկ:

ԱՐԱՅԱԹ ՎՏԱՆՈՒՄ

Մինչ այդ, պաղեստինեան իշխանութեան արտաքին գործոց նախարար Նապիլ Շաաթ երէկ յայտնած է, թէ Արաֆաթի կեանքը վտանգի տակ կը գտնուի: «Իսրայէլ դարձեալ կը խօսի անոր կեդրոնատեղիին վրայ յարձակելու մասին», ըսած է Շաաթ թղթակիցներու, Գահիրէի մէջ:

Ան կոչ ուղղած է միջազգային համայնքին, որ պաշտպանէ Արաֆաթը:

Շաբաթավերջի անձնասպանական գործողութիւններէն ետք, Իսրայէլի կառավարութեան բանբերը՝ Աի Փապնէր ամբաստանած է Արաֆաթը իսլամական արմատական շարժումներու հետ դաշինքներ գոյացուցած ըլլալու յանցանքով, իր մրցակիցին՝ վարչապետ Մահմուտ Ապպաի խաղաղարար ճիգերը խափանելու համար:

Իսկ Շարոնի բանբերը՝ Ռասան Կիսի խօսած է Արաֆաթի քաղաքական բեմէն եւ նոյնիսկ գրաւեալ հողերէն անհետացումին մասին:

Արաֆաթ հերքած է իր դէմ ուղղուած ամբաստանութիւնները:

Այս մթնոլորտին մէջ է որ Թորոնթի մէջ երէկ սկսած են երկօրեայ բանակցութիւններ՝ իսրայէլացիներու եւ պաղեստինցիներու միջեւ փոխարարվատահութեան հաստատման նպատակով, ճափոնի արտաքին գործոց նախարարութեան հովանաւորութեամբ եւ մասնակցութեամբ կառավարական առեւտրական եւ ակադեմիական ներկայացուցիչներու:

(ԱՅՓ)